Հաստատում եմ՝ Վանաձորի Հ. Թումանյանի
անվան պետական համալսարանի ռեկտոր,
Տեխ.գ.դ., պրոֆեսոր _____ Ռ.Սահակյան
«08» ապրիլի, 2021թ.

ԿԱՐԾԻՔ

Արտակ Էդվարդի Ղազարյանի «Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության գործունեությունը Վրաստանում 1918-1920թթ.» Է.00.01 - «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Հայաստանի առաջին Հանրապետության պատմության ուսումնասիրությունը մշտապես գտնվել է հայ պատմաբանների ուսումնասիրության ոլորտում: Հատկապես վերջին երեք տասնամյակում առաջին հանրապետության պատմության մի շարք հիմնարար խնդիրների վերաբերյալ հրատարակվել են բազմաթիվ արխիվային նյութեր և փաստաթղթերի ժողովածուներ, լույս են տեսել մենագրություններ, պաշտպանվել ատենախոսություններ: Իրականացված մեծածավալ աշխատանքի շնորհիվ գիտական վերլուծության է ենթարկվել Հայաստանի Հանրապետության 1918-1920թթ. պատմությունը, օբյեկտիվ գնահատական տրվել հանրապետության ներքին և արտաքին կյանքին վերաբերող պատմական իրադարձություններին: Այդուհանդերձ Հայաստանի առաջին Հանրապետության պատմության ուսումնասիրությունը ավարտված համարել չի կարելի, քանզի շատ հարցեր առ այսօր դեռևս իրենց գիտական պարզաբանումները չեն ստացել: Դրա վկայություններից մեկը Արտակ Էդվարդի Ղազարյանի «Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության գործունեությունը Վրաստանում 1918-1920թթ.» թեմայով թեկնածուական ատենախոսությունն է: Թեմայի ընտրությունն ինքնին ուշագրավ է ու հետաքրքիր, քանի որ առնչվում է մեր անմիջական հարևան Վրաստանին: Ճիշտ է, հայ պատմաբաններն իրենց՝ ուսումնասիրություններում անդրադարձել են հայ-վրացական 1918-1920թթ. պատմության առանձին դրվագներին ու հարցերին, սակայն

ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության գործունեության ամբողջական ուսումնասիրության գործը դեռևս առանձին ուսումնասիրության առարկա չի դարձել: Այս առումով ատենախոսի կողմից թեմայի ընտրությունը ողջունելի է, որը կոչված է լրացնելու վերը նշված խնդրի բացը: Ընդսմին, եթե նկատի ունենանք, որ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների մեջ, թերևս, ամենածանրաբեռնվածը Վրաստանում գործող ՀՀ դիվանագիտական կորպուսն էր, որի միջոցով իրականացվում էր Թիֆլիսում գտնվող օտարերկրյա պետությունների հետ տարվող բանակցությունները, ապա ավելի է կարևորվում սույն թեմայի ուսումնասիրությունը: Այն հնարավորություն է տալիս առավել լավ հասկանալ 1918-1920թթ. պատմական իրադարձությունների ու ժամանակի գործընթացների տրամաբանությունը, դեպքերի ու իրադարձությունների էությունը: Ատենախոսության թեման արդիական է, քանի որ հնարավորություն է տալիս 1918-1920թթ. հայ-վրացական հարաբերությունների և Վրաստանում հայկական դիվանագիտական ներկայացուցչության գործունեության վերլուծության հիման վրա հետևություններ անել արդի հայ-վրացական հարաբերությունների ընթացքի ու հետագա զարգացման միտումների մասին:

Ա. Ղազարյանը արխիվային և փաստական հարուստ նյութերի, հայ, վրացի և օտար բազմաթիվ հեղինակների ուսումնասիրությունների հիման վրա կարողացել է ստեղծել ինքնատիպ, կուռ կառուցվածքով և հիմնավոր շարադրանքով ամբողջական աշխատանք: Նա բավական համոզիչ ներկայացրել է թեմայի ընտրության կարևորությունը, հիմնավորել արդիականությունը, իր առաջ դրած նպատակն ու խնդիրները, ինչպես նաև գիտական նորույթն ու մեթոդաբանությունը: Ատենախոսությունը ծավալուն, ինքնուրույն ուսումնասիրություն է, բաղկացած չորս գլխից, որոնցից յուրաքանչյուրն ունի նաև ենթագլուխներ: Ատենախոսության առաջին գլխում՝ «Պետականության վերականգնումը և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության բացումն ու գործունեությունը 1918թ. երկրորդ կեսին: Փախստականների հարցը», հեղինակն անդրադարձել է 1918թ. հուլիսին Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության բացմանը և նրա գործունեությանը, 1918թ. հուլիս - նոյեմբեր ամիսների հայ-վրացական հարաբերությունների պատմությանը, այդ հարաբերություններում առաջացած լարվածությանը, Ախալքալաքի գավառում

դիվանագիտական ներկայացուցիչ ունենալու խնդրին, Ջավախքում հայ փախստականների հարցով ներկայացուցչության ձեռնարկած քայլերին: Ատենախոսին հաջողվել է արխիվային հարուստ նյութերի, սկզբնաղբյուրների և թեմային վերաբերող պատմական գրականության օգտագործմամբ մանրամասն ու հանգամանորեն ներկայացնել Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության բացման անհրաժեշտությունը, կարևորությունը և նրա տնտեսական - քաղաքական, ռազմական - կազմակերպական բազմաբնույթ գործունեությունը: Ատենախոսը մի շարք փաստերով հիմնավորում է, որ ներկայացուցչության գործունեությունը միտված է եղել նպաստելու ՀՀ առաջ կանգնած դիվանագիտական, ռազմական, պարենային, ֆինանսական, գաղթականության և այլ խնդիրների լուծմանը, ՀՀ արտաքին կապերի ապահովմանն ու ամրապնդմանը: Ատենախոսության շարադրանքից ակնհայտ է դառնում, որ պատմական այս փուլում, որն աչքի ընկավ հայ-վրացական սահմանային հարցերով պայմանավորված լարվածությամբ, Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունը Արշակ Ջամալյանի ղեկավարությամբ գտնվել է իր բարձրության վրա: Նա անհրաժեշտ ջանքեր է գործադրել Հայաստանի Հանրապետության պետական, քաղաքական շահերը պաշտպանելու համար, չնայած գործել է չափազանց լարված և բարդ իրավիճակում, երբ խաթարվել էին երկու հարևան երկրների հարաբերությունները:

Ատենախոսության երկրորդ գլխում, որը վերնագրված է՝ «ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունը 1918թ. վրաց - հայկական պատերազմին հաջորդող ժամանակահատվածում (1919թ. հունվար - 1920թ. վերջ)», հեղինակը հանգամանորեն ներկայացրել է հայ - վրացական պատերազմին հաջորդած, դաշնակիցների միջնորդությամբ հրավիրված կոնֆերանսի աշխատանքները, դրանց ընթացքը, արդյունքները, կոնֆերանսի կազմակերպման գործում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության գործունեությունը: Հեղինակը նշված գլխում անդրադարձ է կատարել երկու հանրապետությունների միջև պատերազմի պատճառով ընդհատված դիվանագիտական հարաբերությունների վերականգնման պատմությանը, այդ ուղղությամբ ՀՀ կառավարության ջանքերին և նորանշանակ ներկայացուցիչ Լ.Եվանգուլյանի հետևողական գործունեությանը: Հիմնավորվում է,

որ 1919թ. մարտին ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ նշանակված Լ. Եվանգուլյանի անմիջական ջանքերով նոյեմբերին Թիֆլիսում ստորագրվել է Հայաստանի համար տնտեսական կարևոր նշանակություն ունեցող ազատ տարանցման պայմանագիր: Առաջ է քաշվում այն միտքը, որ 1919թ. հունվար - 1920թ. վերջին վերականգնվել են հայ - վրացական պատերազմի պատճառով խաթարված հարաբերությունները, քայլեր են ձեռնարկվել Բաթումում, Սուխումում հայկական հյուպատոսություններ բացելու ուղղությամբ: Ատենախոսը եզրակացնում է, որ այդ քայլերը նպաստել են Վրաստանում տիրող հակահայկական մթնոլորտի ու տրամադրվածության թուլացմանը, այնուհետև՝ նաև դրա վերացմանը: Առանձին ուսումնասիրության նյութ է դարձել Վրաստանում ՀՀ հյուպատոսական համակարգի ձևավորման և դրա աշխատանքների համակարգման գործում Թիֆլիսի ներկայացուցչության գործունեությունը: Բացահայտված է ՀՀ դիվանագիտական ներկայացուցչի հետևողական գործունեությունը Բաթումում, Սուխումում, Փոթիում գործող ՀՀ հյուպատոսական ծառայությունների հետ կապեր հաստատելու և ամրապնդելու ուղղությամբ: Ատենախոսը ճիշտ է նկատում, որ ՀՀ դիվանագիտական համակարգն իր կառույցների միջոցով փորձել է լուծումներ տալ հայությանը հուզող մի շարք խնդիրների: Սակայն դա՛ ՀՀ ներկայացուցչությանը միշտ չէ հաջողվել, քանի որ վրացական իշխանությունները երբեմն այդ խնդիրներին լուծում տալու հարցում չեն աջակցել, հաճախ նույնիսկ ստեղծել են քաշքշուկներ ու դժվարություններ:

Մեծ է եղել ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության դերը հայ-վրացական առևտրատնտեսական հարաբերությունների կարգավորման ու դրանց իրականացման գործում, որին ատենախոսը արխիվային հարուստ նյութերի օգտագործմամբ հանգամանորեն անդրադարձել է երկրորդ գլխի չորրորդ ենթահարցում:

Ատենախոսության երրորդ գլխում հեղինակը ներկայացնում է Վրաստանից Հայաստան զենք - զինամթերքի ու ռազմական և այլ ունեցվածքի տեղափոխման, զինակոչի խնդրում դիվանագիտական ներկայացուցչության գործունեությունը: Ա. Ղազարյանը մանրամասն անդրադարձել է այդ գործում ՀՀ ներկայացուցչության առջև ծառացած դժվարություններին, վրացական իշխանությունների հարուցած բազմաթիվ խոչընդոտներին ու արգելքներին, Հայաստանի հասցեով ուղարկված զենք

- զինամթերքի մի մասի նկատմամբ վրացիների ունեցած հավակնություններին: Արխիվային փաստաթղթերի հիման վրա ատենախոսը բացահայտել է, որ Հայաստանի հասցեով ստացված պարենը և զենք - զինամթերքը Հայաստան առաքելու համար վրացական կողմը պահանջել է իրեն թողնել դրանց 25 տոկոսը և հրաժարվել Վրաստանի նկատմամբ տարածքային պահանջներից: Դա առաջ է բերել Վրաստանի հետ նոր տարաձայնությունների, որոնք հաղթահարելու համար ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունը գործադրել է լրացուցիչ ջանքներ: Անդրադառնալով վրաց-ադրբեջանական ռազմաքաղաքական դաշինքի կնքման հարցում դիվանագիտական ներկայացուցչության գործունեությանը, ատենախոսը բացահայտել է ինչպես ՀՀ կառավարության, այնպես էլ Վրաստանում իր ներկայացուցչի հավասարակշռված դիրքորոշումը: Նշվում է, որ Հայաստանի Հանրապետության դիվանագիտությունը, ելնելով ՀՀ շահերից, նախընտրել է Կովկասում դիվանագիտական մեկուսացումից խուսափելու և Դոնից ու Կուբանից հացահատիկի, զենք - զինամթերքի ներկրումը Հայաստան ապահովելու նպատակով չփչացնել հարաբերությունները հարևան երկրների, ինչպես նաև Դենիկինի հետ: Ատենախոսն այս գլխում նույնպես արխիվային նորահայտ փաստաթղթերի ու մամուլի հրապարակումների հիման վրա լուսաբանում է այն մեծ ծավալի աշխատանքը, որ իրականացնում էր ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունը այդ բարդ ու հակասական ժամանակներում:

Ատենախոսության չորրորդ գլխում՝ «ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության գործունեությունը սահմանային - տարածքային և հայ-վրացական դաշինքի ձևավորման ուղղությամբ 1919-1920թթ.», ատենախոսը ներկայացրել է 1919թ. հունվարյան կոնֆերանսից հետո ընկած ժամանակաշրջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության դժվարին աշխատանքը մի շարք խնդիրների հաղթահարման գործում: Ատենախոսությունում բացահայտվում է այն իրողությունը, որ Վրաստանը մայիսի 7-ին Ռուսաստանի հետ կնքած պայմանագրից հետո ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունից գաղտնի է պահել Ախալքալաքը և Լոռու չեզոք գոտին իր տարածքի անբաժան մաս համարելը: Նշվում է, որ վրացական իշխանությունները, անտեսելով Հայաստանի Հանրապետության հետ 1919թ. փետրվարի 28-ին և մարտի 3-ին կնքած համաձայնագրերը, խոչընդոտել են Հայաստան զենք տեղափոխելը և,

առանց հայկական կողմի իմացության ու համաձայնության, զորքերի տեղաշարժ կատարել Արդահանի շրջանում:

Առանձին ուսումնասիրության առարկա է դարձել Թուրքիայի հետ պատերազմի պայմաններում հայ-վրացական պաշտպանական դաշինքի կնքման ուղղությամբ ՀՀ ներկայացուցչության իրականացրած ջանքերը, որոնք ուղղորդվում էին ՀՀ կառավարության կողմից: Սակայն դրանք հաջողություն չունեցան 1920 թ. ամռանը թուրք - վրացական դաշինք կնքվելու կապակցությամբ, ըստ որի՝ հայ - թուրքական պատերազմ սկսվելու դեպքում Վրաստանը պահպանելու էր չեզոքություն ու ստանալու էր Բորչալուի, Ախալքալաքի գավառներն ու Արդահանի շրջանը:

Թեմայի ուսումնասիրությունից ատենախոսը հանգել է միանգամայն իրատեսական եզրակացության. այն է՝ 1918-1920թթ. հայ - վրացական հարաբերություններում Հայաստանի Հանրապետության կառավարությունը թերագնահատել է բոլշևիկյան գործոնը, իսկ վրացական կողմը գերադասել է առաջնային համարել սեփական շահը: Արդյունքում, Հայաստանի Հանրապետությունը հայտնվեց մեկուսացման մեջ, իսկ հայ-վրացական բանակցությունները, պաշտպանական դաշինք ձևավորելու ուղղությամբ, այն ժամանակվա քաղաքական իրադարձությունների «տրամաբանական զարգացման» արդյունքում ձախողվեցին:

Ատենախոսության եզրակացությունում հանրագումարի բերելով իր ուսումնասիրության արդյունքները՝ Արտակ Ղազարյանը կատարում է միանգամայն ընդունելի եզրահանգումներ, որոնք տրամաբանական են և հիմնավոր:

Արժևորելով ատենախոսի կատարված մեծածավալ աշխատանքը, հարկ ենք համարում նշել, որ ատենախոսությունը զերծ չէ որոշակի թերություններից: Դրանք հիմնականում վերաբերում են ատենախոսության գլուխներին ու ենթագլուխներին, որոնց մի մասը երբեմն երկարաշունչ է, առանձին դեպքերում՝ ոչ հստակ: Այսպես, ատենախոսության առաջին գլուխը վերնագրված է «Պետականության վերականգնումը և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության բացումը ու գործունեությունը 1918թ. երկրորդ կեսին: Փախստականների հարցը»: Կարելի էր այն վերնագրել՝ «Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության հիմնումը և գործունեությունը 1918թ. երկրորդ կեսին»: Բանն այն է, որ ՀՀ պետականության

վերականգնումը այս գլխի վերնագրում շեշտելն ատենախոսության թեմայի շրջանակներից դուրս է: Այն ամենևին էլ ատենախոսի խնդիրը չէ, քանի որ հայ պատմագրությունում վաղուց հիմնավորապես շարադրված է: Հարկ չկա նաև վերնագրում փախստականների հարցը հատուկ շեշտելը, քանզի դրան նվիրված է առաջին գլխի երրորդ ենթագլուխը: Տվյալ վերնագրում փախստականների հարցը ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության գործունեության հետ ներկայացվում է նույն հարթության վրա: Մինչդեռ փախստականության հարցի լուծումը բխում էր դիվանագիտական ներկայացուցչության գործունեությունից: Փաստենք, որ այս իրողությունը ընդունում է նաև ատենախոսը՝ ընդգծելով, որ գաղթականության հարցը «ՀՀ ներկայացուցչության համար օրակարգային է» (Տե՛ս ատենախոսություն, էջ 85, սեղմագիր, էջ 10):

Առաջին գլխի երկրորդ ենթագլուխը վերնագրված է «Դիվանագիտական ներկայացուցչության գործունեությունը պատերազմին նախորդող փուլում»: Ատենախոսության թեմայի տրամաբանությունից ելնելով, կարելի էր այն ավելի հստակ ձևակերպել, դիցուք՝ այսպես. «Դիվանագիտական ներկայացուցչության գործունեությունը մինչ հայ-վրացական պատերազմը»: Երկրորդ գլուխն ատենախոսը վերնագրել է «ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունը 1918թ. վրաց - հայկական պատերազմին հաջորդող ժամանակահատվածում (1919թ. հունվար - 1920թ. վերջ)»: Այստեղ «պատերազմին հաջորդող ժամանակահատվածում» արտահայտությունն այնքան էլ հայեցի չէ: Դարձյալ ատենախոսության թեմայի տրամաբանությունից և իրադարձությունների ընթացքից ելնելով, այս գլուխը կարելի էր վերնագրել՝ «ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության գործունեությունը հայ-վրացական պատերազմից հետո (1919թ. հունվար - 1920թ. վերջ)»:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլուխը կրում է «Դիվանագիտական ներկայացուցչության գործունեությունը 1919թ. վրաց - ադրբեջանական ռազմաքաղաքական դաշինքի կնքման հարցում» վերնագիրը: Թերևս ճիշտ կլիներ վերնագրում «հարցում» բառի փոխարեն գրել «շրջանում», որն ավելի է համապատասխանում խնդրի էությանը:

Ատենախոսությունն, անշուշտ, ավելի կշահեր, եթե բոլոր ենթագլուխներն ավարտվեին եզրահանգումներով: Ցանկալի կլիներ, որ Վրաստանում ՀՀ

դիվանագիտական ներկայացուցչության գործունեությունը ներկայացնելիս պարզաբանվեր, թե ինչ ճակատագիր ունեցավ հայկական կորպուսի գույքի Հայաստան տեղափոխելու հարցը:

Հայ-վրացական հարաբերություններում, անշուշտ, երկրորդական չէր նաև Անդրկովկասյան Հանրապետության ընդհանուր ունեցվածքի հայերին հասնող բաժնի լուծման հարցը, որին աշխատանքում տեղ չի հատկացվել:

Ատենախոսության վերաբերյալ սույն նկատառումները բնավ չեն ստվերում Արտակ Ղազարյանի կատարած մեծածավալ ուսումնասիրությունը, որն արժեքավոր և կարևոր է հայ պատմագրության համար: Այն ամբողջովին համապատասխանում է թեկնածուական ատենախոսությանը ԲՈԿ-ի ներկայացրած պահանջին, իսկ նրա հեղինակը միանգամայն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Արտակ Ղազարյանի թեկնածուական ատենախոսությունը և սեղմագիրը քննարկվել են Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարանի պատմության ամբիոնի նիստում՝ կայացած 07.04.2021թ. արձանագրություն թիվ 9:

Նիստին մասնակցում էին պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ֆ.Վ. Մովսիսյանը, պատմական գիտությունների թեկնածուներ, դոցենտներ Յու. Վ. Ղուլյանը, Վ. Ա. Խաժակյանը, Ս. Շ. Աղաջանյանը, Մ. Ա. Բրուտյանը, Լ. Ս. Կոստանդյանը, Ա.Տ.Մելիքյանը, Ա.Ա.Կոխլիկյանը, փ.գ.թ, դոցենտ Ա.Ա.Գրիգորյանը, դասախոսներ Ա. Ռ. Բերնեցյանը, Ա.Հ.Հարությունյանը, Հ.Ա.Մատինյանը: Ելույթ ունեցան պ.գ.թ., դոցենտներ Յու. Վ. Ղուլյանը, Ս. Շ. Աղաջանյանը, Մ.Ա. Բրուտյանը, պ.գ.դ., պրոֆեսոր Ֆ. Վ. Մովսիսյանը:

ՎՊՀ պատմության ամբիոնի վարիչ,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Ֆ.Վ.Մովսիսյան

պ.գ.դ., պրոֆեսոր Ֆ.Վ.Մովսիսյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՎՊՀ գիտական քարտուղար, մ.գ.թ., դոցենտ՝ Ս.Ս.Բեժանյան